

## **«Կոնվերս Բանկ» ՓԲԸ «Ծառայությունների Ուղղորդում» Ծրագրի Պայմաններ**

### **1. Ընդհանուր պայմաններ**

1.1. «Ծառայությունների ուղղորդում» ծրագիրը «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ տեքստում կհիշատակվի որպես Բանկ) կողմից մատուցվող ծառայությունների վաճառքի խթանման նպատակով Բանկի կողմից իրականացվող ծրագիր է (այսուհետ՝ Ծրագիր):

1.2. Ծրագրի շրջանակներում Ուղղորդող կարող են հանդիսանալ Բանկի հաճախորդ հանդիսացող կամ չհանդիսացող.

- ֆիզիկական անձինք,
- իրավաբանական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը:

Ուղղորդող չեն կարող հանդիսանալ.

- Ուղղորդող անձը չի կարող միաժամանակ հանդես գալ որպես ուղղորդվող,
- Բանկի աշխատակիցները և Բանկի հետ ծառայությունների մատուցման պայմանագրով ծառայություններ մատուցող անձինք:

1.3. Սույն պայմանները հանդիսանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանդարտ պայմաններով պայմանագիր կնքելու հրավեր, և մյուս կողմը, Ծրագրի պայմաններին համապատասխան գործողություններ կատարելով, անվերապահորեն ընդունում է առաջարկվող պայմաններն ամբողջությամբ:

### **2. Ուղղորդման գործընթացը**

2.1. Ուղղորդողը Բանկի կողմից մատուցված ծառայություններից (այսուհետ՝ Ծառայություն) օգտվելու ցանկություն ունեցող ուղղորդվող անձի (այսուհետ՝ Հաճախորդ) առկայության դեպքում պետք է մուտք գործի Բանկի պաշտոնական կայք, լրացնի Ուղղորդման հայտը և Ուղղորդման հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ստանա չկրկնվող ուղղորդման կոդ (այսուհետ՝ Կոդ): Կոդը վավեր է 1 ամիս՝ Կոդի գեներացման պահից սկսած:

2.2. Ուղղորդման հայտը լրացնելիս՝ Ուղղորդողը համաձայնվում է «Ուղղորդման ծրագրի մասնակցության պայմաններին» ուղղորդման հայտում «Համաձայն եմ Պայմաններին» նշումն ակտիվացնելու միջոցով: Վերջինիս հաստատումը համարվում է Պայմանագրի պատշաճ ստորագրում Ուղղորդողի կողմից:

2.3. Ուղղորդման հայտը լրացնելուց հետո Ուղղորդողը ուղղորդման հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեին Բանկի կողմից ստացված Կոդը տրամադրում է Հաճախորդին:

2.4. Միաժամանակ, Բանկը վերջինիս Ուղղորդողի կողմից Ուղղորդման հայտում նշված Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով տեղեկացնում է Ծրագրին ներգրավման մասին:

### **3. Ուղղորդվող ծառայությունների տեսակները**

3.1. Նոր իրավաբանական անձ հաճախորդի ներգրավում,

3.2. Նոր վճարային քարտ, բացառությամբ Բանկի կողմից կազմակերպվող ակցիաների շրջանակներում անվճար տրամադրվող վճարային քարտերի և կից/հավելյալ քարտերի: Քարտերի տեսակները. ԱրՔա, VISA Electron, VISA Classic, MasterCard Standard, MasterCard Gold, VISA Gold, VISA Platinum, Visa Infinite: Վճարային քարտերը տրամադրվում են Բանկի գործող սակագներով: Չի տարածվում արտոնյալ պայմաններով, այդ թվում՝ աշխատավարձային նախագծերի շրջանակներում տրամադրվող վճարային քարտերի և մեկանգամյա օգտագործման վարկային քարտերի վրա:

### **4. Ուղղորդող անձի պարզևատրումը**

4.1. Ուղղորդող անձին պարզևավճարը վճարվում է միայն հաջողված ուղղորդումների համար:

4.2. Ուղղորդումը համարվում է հաջողված, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ պայմանները.

- Ծառայությունը փաստացի տրամադրվել է (մատուցվել է),
- Ծառայության տրամադրման պահին Հաճախորդը ներկայացնում է տվյալ ուղղորդմանը համապատասխանող Կողմի Բանկի գլխավոր գրասենյակ կամ մասնաճյուղ,
- Ծառայության տրամադրման պահին Կողմի վաղեմության ժամկետը լրացած չէ:

4.3. Բանկի կողմից Հաճախորդին Ծառայությունների մատուցման մերժման կամ ծառայությունները այլ հիմքով չմատուցելու դեպքում Ուղղորդողին պարզևավճար չի վճարվում:

4.4. Ուղղորդող անձին պարզևավճարների վճարումը կատարվում է՝ Ուղղորդման հայտում լրացված դրամային բանկային հաշվի (իրավաբանական անձանց դեպքում՝ նաև էլեկտրոնային հաշվի) հիման վրա՝ մինչև Ծառայության փաստացի տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը:

4.5. Եթե ուղղորդող անձը հանդիսանում է ֆիզիկական անձ, ապա պարզևավճարների վճարումն իրականացնելիս Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանդես է գալիս որպես Ուղղորդողի հարկային գործակալ՝ ապահովելով պարզևավճարներից եկամտահարկի գումարի փոխանցումը պետական բյուջե:

4.6. Պարզևավճարի չափը սահմանվում է ներքոնշյալ աղյուսակում.

Ծառայություն		Պարզևավճարի չափ (ՀՀ դրամ)
Նոր իրավաբանական անձ հաճախորդ		5,000
Նոր վճարային քարտ (համաձայն սույն պայմանների կետ 3.2-ի)	Արքա, Visa Electron, Visa Classic, MasterCard Standard	1,200
	MasterCard Gold, Visa Gold, Visa Platinum, Visa Infinite	6,500

**5. Այլ դրույթներ**

5.1. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Ծրագրի պայմանները (Ծառայության ավելացում/դադարեցում, պարզևավճարի չափի փոփոխություն, ամսական ուղղորդված Ծառայության քանակային սահմանափակման կիրառում)՝ այդ մասին համապատասխան տեղեկատվությունը նախապես տեղադրելով Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում: